ՏԵՂԵԿԱՆՔ
լրացված հոդվածի մասին

Հոդված 19. Ավագանու անդամի պարտականությունները

1. Ավագանու անդամը պարտավոր է՝
1) մասնակցել ավագանու նիստերին.
2) ավագանու կանոնակարգով սահմանված կարգով անդամակցել որևէ մշտական հանձնաժողովի, մասնակցել դրա նիստերին.
3) մասնակցել ավագանու կողմից անցկացվող Երևանի բնակիչների ընդունելություններին.
3.1) Պարբերաբար հանդիպել համայնքի բնակչության հետ, համայնքի ընտրողներին տեղեկացնել համայնքի ավագանու աշխատանքների մասին.
4) չմասնակցել ավագանու այն որոշման քվեարկությանը, որն առնչվում է իր, իր ընտանիքի անդամների և մերձավոր ազգականների մասնավոր շահերին.
5) իրականացնել սույն օրենքով և ավագանու կանոնակարգով սահմանված այլ պարտականություններ: